

Ա պագա կրթության կառավարիչները Վրաստանում

2014 թվականի հոկտեմբերի 18-30-ը Կրթության կառավարման ամբիոնի, մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհիներ Աստղիկ Պետրոսյանը, Արուսյակ Հարությունյանը,

Լիանա Արսենյանը, Ալինա Աղասյանը և Անետ Դիլանյանը ծրագրի շրջանակներում իրենց ուսումնական պրակտիկան անցան Վրաստանի Իլիայի անվան պետական համալսարանում, որը գտնվում է հենց մայրաքաղաք Թիֆլիսում:



Պրակտիկայի ընթացքում նրանք ծանոթացան Իլիայի համալսարանի միևնույն մասնագիտության կրթական ծրագրի հետ և մասնակցեցին ոչ միայն Կրթության կառավարման ամբիոնի կողմից իրականացվող դասընթացներին այլև մասնակցեցին «Հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաներ» թեմայով սեմինարին, որը վարում էր Ամերիկայից հրավիրված մասնագետը: Դասերից զատ

կազմակերպվել է հանդիպում Վրաստանաբնակ հայ ուսանողների հետ: Ուսանողները այցելել են նաև Գնահատման և թեստավորման ազգային կենտրոն, Որակի ապահովման կենտրոն և Իլիա համալսարանի Որակի ապահովման վարչություն և ծանոթացել իրականացվող գործառույթների հետ:



